

և տեսիրը. աւերակք զարմանագործ  
 Գարագալէի կ'ամբառնան իրենց յան-  
 գուգն ստուերական ծրագիրը. մինչ  
 անդին ի խորս տեսարանին՝ հօկայա-  
 կան ձոյն Մ'Ռսեաց՝ կամաց կամաց կը  
 փարատէ ու կը պարզուի վարդապոյն  
 գոյրչեաց փառաւորութենէն. Թեթե-  
 են օղք. երկինք դեռ ևս տփգոյն կա-  
 պոյտ, բայց այնչափ ջինջ և մարուր,  
 որ կը փութամ՝ մէկէն ճամբայ ելնել,  
 որպէս զի կարենամ ժամ մը աւելի  
 վայելել այդ քաղցր զովութիւնը, որ  
 աւանդ, խիստ սակաւատե է:

Ժամը հինգին՝ առանց սրտի ցաւ  
 զգալու, հրաժեշտի ողջոյնս կուտամ  
 Գարագալէի չափարաց և իրենց խեղճ  
 ու անարգ որջին, որ ամենէն աւելի  
 տխուր յիշատակներէս մէկն է, ու կա-  
 բուանը կը սկսի յառաջել հիւսի-  
 սային արևմտեան ուղղութեամբ. գեռ  
 չաւարտած քարայտակ ուղիէ մը,  
 որ կը կարէ քարակարկառ բլուր մը:  
 Երասխայ ափանց վրայ՝ ի ծայր  
 քնդարձակածաւալ դաշտին ուր կը

բարձրանայ Գարագալէ, կը տեսնուի  
 գեղեցիկապէս՝ աստիճանեալ և բողբոջի՝  
 հին քաղաքն Սուրմալու. Բոլոր գաշտը  
 լի է ոչ այնչափ հետաքննական աւերակ-  
 ներով, բայց ցուցընելով միանգամայն  
 լի է ժամանակաւ բազմամարդ բնա-  
 կութեան տեղ եղած պիտի ըլլայ:

Հազար հարիւր տասն մետր բարձ-  
 բանալէն յետոյ, կը սկսի ամենարագ  
 վայրէջքն ի կողմ. կարմիր ու կապ-  
 տագոյն կրախառն կաւային՝ կարգէ  
 գուրս սահուն հողոյ մը վրայ որ կ'եր-  
 թայ կը խառնուի Չինչավաչայի աղի  
 ու տղմուտ ջրոցը հետ: Բայց վեր-  
 ջապէս յարդարուն ճամբայ մը կ'ա-  
 ռաջնորդէ կը տանի զվեց մինչ ի կողմ,  
 և յարգանք կ'ողջունեմ մեծարանաց  
 արժանի աղի լեռը: Բայց հոն ալ պի-  
 տի չկարենանք բնակութեան վրաննիտ  
 կանգնել, զի հանքին վերատեսուչը կը  
 պնդէ որ իւր տունն իջնենք: Մաքուր  
 և բանուկ օդ ունեցող սենեակ մը կը  
 ցուցընէ, ուր կը ձգուին ու պատրաս-  
 տուին մեր սնկողիներ:

(Շարացարեի)

## Հ Ա Ն Դ Ե Ս Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Խ Ա Ղ Ա Մ Ո Լ

(Տես յ'էջ 511)

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԻ

Հրակն և Սեպտան

Հրակն. — Ախ... (զողջողջաղով  
 կ'իլնայ արոտի մը վրայ հանգչեալ) ...  
 Ինչ էր լսածս... Ինչ տեսածս... երան  
 է... աչքերս բան չեն տեսներ... Ժնկուր-  
 ներս դիս վեր չեն բուներ... (կը մնայ կիս  
 մարած քրեռքեան վեջ):

Սեպտան. — Սմբատ... սիրելի Սըմ-  
 բատ... անմեղ Սմբատ (կահանաձայն կու  
 լայ՝ սեղանի մը վրայ խնամքով):

(Քանի մի մանրերկրորդ լսոտրիւն ես լաց)  
 Հրակն. — (Ոտք ելլելով) Սմբատս  
 քո՞ կը դատապարտուի... ո՛հ, չէ՛. ան-  
 հարին բան է... մեծ գաւ մը ծածկուած  
 է... ո՛հ, ինչպէս, ինչպէս իմանամ...  
 Աստուած արդար, օգնէ ինձի... Այս ե-  
 բիտասարդ չեմ՝ ճանչնար ս'լ է, բայց քիչ  
 առջ ինքն՝ ըսաւ որ Սմբատի բարեկամ  
 եմ. ուրախացաւ՝ երբ յայտնեցի որ Հրակն  
 մահուան ծանուցագիրն սուս է հիմա ալ կու  
 լայ անմխիթար Սմբատի բռնուելուն վրայ,  
 Սմբատի անմեղութիւնը կ'երգուրնար. ու-  
 բեմն Սմբատի մտերիմ և ճշմարիտ բարե-

կամն է, ինծի պէս կր սիրէ Սմբատը, և ետ կրնամ իրեն վրայ զստահանալ, ինչպէս զինքս յայտնել իրեն միայն, որ մէկտեղ աշխատինք Սմբատն ազատելու և ստոյգ յանցատրը գաննելու... ինծի տեղեկութիւն պէտք է՝ թէ ի՞նչ զողովիւն եղած է բանկէն, ո՞վ է այն Մուշեղը՝ որուն քով Սմբատի նամակը գտնուեց է, քիչ նամակ է այն... զուցէ իմ մահուանս ծանուցագրին պէս շինուած է... ո՛հ, ստկալի մտածութիւն... Գարեգինն ու Յարոն շինած ըլլան... ոտքես պոկուս կը գողտմ... պէտք է, պէտք է շուտով իմանամ... (կը մտածեսայ առ Սեպուհ, որ խորին ցառոց ետ հեծեծանաց մէջ ընկողմած է, և մեղմով ուսը ծեծելով՝ կ'ըսէ) Տղայս, բարեկամ... :

Սեպուհ. — (Չգատառանգարով) Ո՛հ, դժուր էք, պարոն... :

Հրակն. — Տո՛ւր ինձ ձեռքդ... տրի... նայէ երեսու... զիս կը ճանչնաս... :

Սեպուհ. — Ներեցէք, պարոն, զքեզ չեմ ճանչնար... արդէն բոլորք որ զուք բազուցի էք... :

Հրակն. — Ես բազուցի չեմ, բարեկամ. ես Ռագուէն եկած եմ... և տեսայ որ դուն Սմբատին ճշմարիտ մտերիմ բարեկամն ես... տեսայ որ դուն Սմբատի նրման ազնիւ ու բարի սիրտ մ'ունիս... ի՞նչ է ահունց, տղայ... :

Սեպուհ. — Սեպուհ է, պարոն. այո՛, կը սիրեմ ես Սմբատը եղբորս պէս, մէկտեղ դարոցի ընկեր եղեր ենք, և ուխտել ենք իրարու մինչև արիւն թափելով՝ մէկմէկու պայտպան ըլլանք... և ահա ծանանակը որ ցուցընեմ... :

Հրակն. — Ո՞վ է քու հայրդ, երեսուսարդ :

Սեպուհ. — Ռոստովցի վանատականն Սուրեն վարդանեան :

Հրակն. — Ազնիւ հոր՝ ազնիւ որդի... ուրիշ բան կարելի չէ... այո՛, Սուրեն հայրդ ինծի լաւ ծանօթ է, ծամանակու իմ պատընկերս ու բարեկամն եղած է... իսկ հիմա նորա որդին՝ դուն Սեպուհ՝ Սմբատի բարեկամն ես... որ քեզի պէս լաւ ու ազնիւ տղայ մ'է և հայր մ'ունի որ

զինքը շատ կը սիրէ... բայց, ո՛հ, տխուս, իրեն անմահ և իր հորը սիրոյն աւարտան որդի մ'ալ ունի, որ... (երեսը ձեռքերով կը ծածկէ ու կը հեկեկայ)... անգութ Գարեգին... անգութ... :

Սեպուհ. — Բայց դուն, պարոն, կուրծ... այլայլած ես... :

Հրակն. — Ո՛հ Սեպուհ, ալ չեմ դիմանար... սիրտս չի կրնար համբերել... ալ չեմ կարող կեղծել... արի՛ իմ գիրկրա... ես Հրանդն եմ, Սմբատի հայրն եմ... :

Սեպուհ. — Ո՛հ, Աստուած, ի՞նչ կը լսեմ (կը գրկախառնուի) :

Հրակն. — (Քանի մի մտերմորդ գրկախառնուած անխուս մնալէ վերջը) Այո՛, Սեպուհ, ես Գարեգինի Սմբատի հայրն եմ, Հրանդն եմ, որը մեռած հուշակած են... իմ գէմբս, ձայնս ու հազուստս կեղծեալ են. յետոյ պատճառը կ'իմացընեմ քեզի... բայց հիմա դեռ ես կեղծուած պէտք է մնամ. միայն քեզի հարկ եղաւ որ ինքզինքս յայտնեմ, որ քու գործակցութեամբ Սմբատս փրկեմ... ո՛ր գիտէ ինչպիսի ահաւոր դժբախտութիւնէ մը... (չոստ կոչ շայ) :

Սեպուհ. — Աստուած արդար և զրեւած, շնորհակալ եմ քեզի... քու գթութեանդ և արդարութեանդ տառաջն պայծառ ճառարայթն սկսաւ փայլիլ Սմբատին վրան... ծագէ քու արդարութեանդ ու ճշմարտութեանդ ամբողջ արեւը, և փարատէ մեր սրբուտէն տերութեանց, տարակուսանաց, սոց ու խաւարի ամպերը :

Հրակն. — Ամէն :

Սեպուհ. — Թո՛ղ սերմն, պարոն Հրանդ, հայր իմ, (ներէ որ ես զքեզ հայր կոչեմ) թո՛ղ որ վագեմ եղբորս Սմբատին իմաց տամ, աւետեմ... :

Հրակն. — Հանգարտէ՛, որդեակ իմ. Սմբատին այո՛ դուն պէտք է իմաց տաս, աւետես իւր հոր ողջ լինելը և գալուստը... բայց ինծի ամենակարեւոր է քանի մը տեղեկութիւններ ունենալ, զորս դուն միայն ինծի կարող ես տալ... :

Սեպուհ. — Պատրաստ եմ, պարոն Հրանդ :

Հրանդ . — Ո՛վ և Մուշեղր :  
Սեպուռն . — Հօրեգործորդիս է , ամեն-  
ազնիւ երիտասարդ մը :

Հրանդ . — Ի՞նչ գողութեամբ ամբաս-  
տանուած է :

Սեպուռն . — Ինքն Աղոյթի բանկին  
գանձապահի գրասենեկին մէջ պաշտօն ու-  
նէր . նոյն պաշտօնատեղէն չի գիտցուիր  
ինչպէս վերցուցեր են 3000 մանէթ տւ-  
րութեան թղթադրամներ . . .

Հրանդ . — Տէրութեան թղթադրամ-  
ներ . . . Այդ թղթադրամներն բանկին հա-  
շուեմասենին մէջ պաշտօնապէս նշանակուած  
էին իբրև մատր ասորեայ . սէկիւզրի ձեր-  
քով կարելի էր մէկ գործ տեսնել . . .

Սեպուռն . — Ի հարկէ , անհրաժեշտ  
եղած պիտի լինին . . . այո՛ , կը յիշեմ ,  
Սմբատն ըստ՝ որ հաշուետարին մէջ Մու-  
շեղր ցուցեր էր նշանակուած՝ 30 հատ 100  
ուրբիկոց թղթադրամներ :

Հրանդ . — Ուրեմն յուսոյ նշոյլ մ՝ ու-  
նինք թէ Մուշեղր և թէ Սմբատը արդա-  
բացընելու և ստոյգ գողը երևան հանելու . . .

Սեպուռն . — Չեմ իմանար ի՞նչ յոյս  
կրնանք ունենալ այդ բանէն . . .

Հրանդ . — Մեծ յոյս , և եթէ Աս-  
տուած յաջողէ՛ նաև ապահովութիւն . . . լու՛  
ուրեմն . Ես չեմ կարող զեռ ինքզինքս յայտնի  
ընել ամենուն . զեռ պէտք է ուշ կամ շատ՝  
իբրև անձանոթ ներկայանամ՝ Գալսեղիկին ,  
զեռ պէտք է վերջնական փորձ մ՝ ալ ընեմ՝  
զինքը խելքի բերելու , որ ես ալ իմ վեր-  
ջին ընելիքս որոշեմ , յոյս ունիմ որ Աս-  
տուած ինծի յաջողութիւն տայ վերջապէս  
լուծելու կալըղցընելու իրեն քարացած սիր-  
արը . յարմար ժամանակին կը ապտեմ ինք-  
զինքս Գարեգինին յայտնելու , Բայց զուր  
կրնաս հիմա , Սեպուռն , երթամ բանտը Սըմ-  
բատին մօտը և իմաց տալ իրեն իմ ո՛վ  
լինելս , որպէս զի միխթարուի ու քաջալե-  
րուի : Թեսոյ գնա՛ (Պրսօժէր—սուղը , և պահան-  
ջէ որ ցուցընեն քեզի՛ դողցուած թղթադրա-  
մներու պաշտօնական հաշուետետրը , Բանկի  
օրէնքը կը պահանջէ՛ որ իւրաքանչիւր թղթա-  
դրամի՛ որ կը ստացուին հաշուի մէջ՝ նաև  
ստուգարանական յայտարար թուանշաններն

ալ գրուին հաշուեգրի մէջ , ինչ որ ամէն մէկ  
թղթադրամի վրայ գեմ՝ առ գեմ՝ տպագրուած  
կը լինի , որով թղթադրամ մի՛ ուրիշ թըղ-  
թադրամի հետ չի կրնար միացուիլ կէս կէս  
կտրտելով կամ խարդախելով : Դուն օրինա-  
կէ՛ նախ այդ 30 հատ 100 ուրբիկոց թըղ-  
թադրամներու յայտարար թիւերը . յետոյ գնա  
նստիկանութեան տեսչին մօտը , և իրեն  
յայտնէ եղած գողութիւնը (եթէ չէ լսեր) ,  
և խնդրէ փրձէն (ստատանալով գաղտնի բա-  
րեկամական հատուցում մը) որ քաղքիս ա-  
մէն դրամափոխներուն և վաճառականներուն  
մօտ և նշանաւոր շուկայից մէջ քննել տայ  
ու տեսնէ թէ այդ յայտարար թիւերն աւ-  
նեցող թղթադրամներն որուն մօտ կը գրու-  
նուին : Անշուշտ 30 հատէն գէթ մէկ հատը  
կը գտնուի Աստուծով . հետևաբար քննելով  
թէ ի՞նչպէս ձեռքէ ձեռք հասած են՝ կը  
հասնուի այն անձին որ գանոնք գողցեր է  
ու զղակի բանկի հաշուետեսնեկէն , Մուշեղի  
մօտէն . . . Ես բնա չեմ տարակուսիր որ  
Սմբատի անուամբ շինուած և առ Մուշեղ  
ղրուած և կամ Մուշեղի մօտը գտնուած  
կեղծ նամակն ալ՝ բուն փողերը գողացողին  
հնարքն ըլլայ . . . Աստուած թող օրհնէ քու  
շանքդ ու աշխատութիւնդ . . . հայրենի օրհնու-  
թիւնս կու տամ քեզի . . . Ինձի , որդեսկ  
իմ , թո՛խր , ժամանակը կարճ է . . . բայց  
դուն կու լա՛ս , որդեսկ իմ . . .

Սեպուռն . — Ա՛խ , հայր իմ , սրտիս ու-  
րախութեանն կուլում . . . արցունքներս ձայնս  
կը խղզեն . . . տո՛ւր ձեռոյ համբուրեմ և լըռ-  
չիմ . . .

Հրանդ . — (կը համբուրէ Սեպուռնի  
ճակատը . Սեպուռն կը մեկնի) :

ՏԵՍԻՆ ԶԱՆՆԵՐՈՐԿ

Հրանդ . — Բայց . . . սակալի՛ մտած-  
մունք մը միայն զիս կը տանջէ , կը զար-  
հուրեցրնէ . . . Գարեգին պարտքերու առկ  
ընկղմած է , շատ տեղերէ փոխառութիւններ  
ըրած է , և որչափ գիտեմ Սմբատի գրած  
նամակներէն՝ այս օրերս Զուռա Պապայի  
պէտք է մեծ գումար մը հատուցանէ . . . իսկ  
երբոր ձեռքը փող չունի . . . երբոր . բոլոր ու-

նեցածնեբր արդէն գրաւի գրած է... ծայրը կը հասնի գոյութիւն ընելու... և ս' դիւտ թէ այս եղած գորութիւնն ուրեմն իր ձեռքով չէ եղած՝ քանի որ մանուսանդ Սմբատն ամբաստանուած է... Ո՛հ, մէկ արժանաւոր որդիս փրկելու ժամանակ՝ ըլլայ թէ ուրեմն իմ ձեռքովս իմ հնարքովս միւրը՝ անարժանը բանուի և գատապարտուի... Թ՛հ, հայր իմ... չէ կարելի՛ եթէ նաև ստոյգ գիտնամ որ գործն ինքն է Գարեգինն... Պէտք է շուտով անդեղեկանամ և ապա հնարք մը գտնեմ չարեաց դէմն աննելու. պէտք է շուտով նետն իմ ծածկարար այս գործին և Գարեգինի անտուժիւնս ժամ մը վերջը գամ կատարեմ... (կ'եղէ):

ՏԵՍԻՆ ԱՄԵՏԱՍԱՅԵՐՈՐԻ

Գարեգին. — (Տխրագին խորհելով) Այո՛... այո՛... անհնարին բան է ուրիշ կերպ ընել... պէտք է մէկ ո՞ր և իցէ հնարք մը գտնեմ՝ Զ՛ուտ Պապայի 5750 մանէթն այս դիշեր հատուցանելու... Ափսո՛ս, ուստի Իվանէն վատարկածո՛ ինչպէս խաղի բախտով եկաւ, այնպէս ալ խաղի բախտով գնաց... Այո՛, բանկէն ձեռք բերածս 3000 մանէթն պատրաստ է. հազար մանէթի շափ ալ ոսկի է արծաթ կայ քոյն, որոնք նագիւ կրցայ ձեռք ձգել՝ ծանր տոկոսներով պարտամուր. նախ տարով հօրս քանի մը բարեկամ վաճառականներու. բայց դեռ կը մնայ անդին 1750 մանէթի պակասը Զ՛ուտ Պապան զո՛ն ընելու համար... բախտս բերէր որ այսօր չգար սունն կոխէր տէրութեան մարդիկներով. երկու օր է որ զիս կը փնտռէ ու չի գտներ, որովհետև տնէս զուրս չեմ հլլեր, ծածկուած փակուած կը մնամ պարտատէր մ'եկած ատեն: Բայց ես լաւ կը ճանչեմ, անկարելի բան է՝ որ այն վատ, ազան և կատարած Զ՛ուտը այսօր ձեռքէն խախտէ... արդէն Յարոյի ըսել է որ պիտի գայ տունս կոխէ... իսկ ես ինչ ընեմ չեմ գիտեր, չուարած մնացեր եմ... անպիտան Յարոն ալ զեռ չգարձաւ՝ որ նայինք արդեօք իր ստատուութեանք կրցա՞ւ տեղէ մը փող ճարել կամ թոյլընել... բախտս զիս Սլում

բառէն ազատեց, հօրս գալէն ազատեց, կը մնայ հիմա որ Զ՛ուտ Պապայէն ալ ազատէր, և ես երկա՛յն ատեն հանգիստ կը մնայի, կ'ուրախանայի, կը խաղայի... Ո՛հ, անա Յարոն:

ՏԵՍԻՆ ԵՐԿԱՏԱՍԱՅԵՐՈՐԻ

Գարեգին և Յարո

Գարեգին. — Յարո՛, տխուր կը դառնաս, չեղա՞ւ...

Յարո. — Է՛հ պարոն Գարեգին, առակը կ'ըսէ. « Տէրտէրն ամէն անգամ գալա՞ր չ'ուտեր »: օր ալ կայ որ ցամաք հացով պէտք է անցընէ, օր ալ կայ որ ուզէ չուղէ պէտք է ծոմ պահէ... այսօր այս վերջին գիպուածն է մեր բախտը, Բայց 'ի սակեց՝ բաներ մ'ալ տեսայ ու լսեցի՛ որ ինծի շատ գուր չեկաւ...

Գարեգին. — Ի՞նչ բաներ...

Յարո. — Սենեկիդ մէջ գոցուած ծածկուած ատենդ այսօր՝ ներկայացաւ յանկարծ նախագաւթին մէջ անձանթով մարդ մը. ի՞նչ հարցոցի, ի՞նչ ըրի, ը՛ր՛, չկարողացայ իր ո՞վ ըլլայն իմանալ. միշտ կ'ըսէր թէ գործս ու իւրերս ուղղակի Գարեգինի հետն է, ես Գարեգինը կը ճանաչեմ, իրեն հետ դրամական խնդրոյ մը վրայ...

Գարեգին. — Ի՞նչ կերպարանք ունէր, Յարո, ծնր էր թէ երիտասարդ, բարձրահասակ ի՞նչ կտրած, ի՞նչ տեսակ էին շորերը...

Յարո. — Կերպարանքը որոշ չտեսայ, որովհետև քիթն ու շարունք պիտի բաշխուով մը փաթուցէր էր, ետպոռնչա մ'ալ վրան ունէր՝ որ շորերը ծածկած էր. միայն տեսայ որ մօտուքը սև էր, իսկ ձայնն ալ խրմախրմի խրմախրմը...

Գարեգին. — Ըսաւ որ զիս կը ճանչնար... կը զարմանամ ո՞վ պիտի ըլլայ... կարելի է վասիլ Ալեանաքի յոյն ըլլայ, որուն մօտ 300 մանէթի պարտամուրհակ մ'ունիմ, որ երկու շաբաթէն պէտք է վճարուի... անշուշտ այն պիտի ըլլայ...

Յարո. — Ես ալ այդպէս պարտապահանջ մը կարծեցի. ուստի ամէն ջանք ըրի՛

որ զինքը նեղացրնեմ, բայց անկարելի եղաւ. բոտա թէ համբերութիւնս երկայն է՝ կը սպասեմ Գարեգինի առն գալուն: Ճարս հասաւ, թողուցի զինքն այնտեղ ու հեռացայ՝ որ յուսահատութիւնով ինքն ալ երթայ կորսուի... և ահա կէս ժամէ մը վերջը լսեցի՝ որ Սմբատը զիս կանչեց. գնացի՝ ինչ տեսնեմ, Սմբատն ու Սեպուհը անծանօթին նեղ կը փափային շիմացայ ինչ բան... բայց Սմբատ՝ Հրանդի՝ ձեր լուսահագի հօր մահուան անցեալ օրուան փոշուէն ընդունած ծանուցադիրը ցուցընելով ինծի՝ սփօսե բռել որ իբրև թէ զուն Գարեգին և ես՝ մէկտեղ շինեք ենք այդ թուղթը և թէ սուա է... վազեցի ներս բանը քեզի յայտնելու, և ահա յանկարծ ներս մտան զինուորներ և Սմբատը բռնեցին տարին... Ճեպցածը արդէն յայտնի է քեզի:

**Գարեգին.** — Վերջը անծանօթն ինչ եղաւ, Յարօ:

**Յարօ.** — Չեմ գիտեր, ա՛լ անկէց վերջը զինքը շտեպս... բայց ինծի այնպէս կ'երևնայ թէ Սմբատ կ'ուզէր անծանօթին ձեռքով ձայն հանել որ Հրանդ ողջ է և թէ Հրանդի մահը սուա է. որպէս զի այս կերպով քու ազատութիւնդ արգիլէ, և իշխանութեանդ ու օրէնքի առջև ունեցած իրաւունքիդ շափ զնէ...:

**Գարեգին.** — Շատ հաւանական է, Յարօ, բսածոյ. բայց հիմոյ արդէն բանտի մէջ ուրիշ բաներ, ուրիշ ցուեր շատ ունի. այդ տեսակ փորձերէ ձեռք կը քաշէ...:

**Յարօ.** — Այո՛, Սմբատէն վախ չկայ, ա՛լ բան չէ կարող ընել, երկար քուն մը պիտի քաշէ բանտի մէջ... բայց ինծի շատ վտանգաւոր կ'երևնայ պարոն Սեպուհը, ա՛մէն գործերը խառնողն ինքն է, Սմբատին կողմէն՝ մեր գործերուն լրատե մ'է...:

**Գարեգին.** — Ճիշդ կ'ըսես, Յարօ. ես ալ այդ բանն անպարզաբն եմ... Ինչ ընելու է:

**Յարօ.** — Պէտք է կերպով մը սպաս հուցընենք զմեզ իր սրատես աչքերէն...:

**Գարեգին.** — Իրաւ կ'ըսես... այսինքն՝ աչքերն այնպէս զոցել տալ՝ որ մէկ մ'ալ բան չտեսնէ...:

**Յարօ.** — Ինչպէս... (չարտրեան ծիծաղով մը):

**Գարեգին.** — Գաւաթ մը զինուց մէջ՝ քիչ մը օրհնած աղ խառնելով՝ զինքը քանի մ'օրուան մէջ մաշելու շափ...:

**Յարօ.** — Հասկըցայ, լաւ հասկըցայ... սովորականին պէս զինքը կը հրաւիրենք այստեղ իբրև ընկերութիւն ընելու, ու երբոր խաղացողներու զինի բաժնեմ, իրեն գաւաթին մէջ... թողէք ինծի... ընելիրս գիտեմ...:

ՏԵՍԻՒԼ ԵՐԻՒՔՏԱՍԱՍՆԵՐՈՐԻ

**Գարեգին, Յարօ, Զնուտ-Պապա, Առաւիկն Ոստիկանապետ, Երկու Չինուորք**

**Ոստիկան.** — (Դրսեկ) Բացէք գուռը (պինդ պինդ բակելով):

**Յարօ.** — Ո՛հ, գուռը կը ծեծեն, արեօք ս'լ է... հարցընեմ...:

**Գարեգին.** — Մէկ քիչ համբեր՛, ս' գիտե՛ չըւայ թէ Զնուտ... սիրտս կը դուրս... ծածկուել չէ կարելի...:

**Ոստիկան.** — (Դրսեկ) Շո՛ւտ, բացէք, թէ չէ կը կտարեմ (բակելով)...

**Գարեգին.** — Յարօ՛, հարցուր ս'լ է. սիրտս կը զբիզբիցայ:

**Յարօ.** — Ո՛վ ես զուն որ բանամ... պիշեր ատեն...:

**Ոստիկան.** — Տէրութեան ոստիկանն եմ. բաց, թէ չէ ահա կը խորտակեմ գուռը (կը սկսին հարուածել):

**Գարեգին.** — Ո՛հ, գուռը կը կտրեն... բաց, Յարօ, բաց... կորսուած եմ...:

**Յարօ.** — (Ներսեկ) Կամաց, կամաց... ահա կը բանամ...:

**Զնուտ.** — Ահառակի ինքը, պարոն ոստիկանապետ... ահա այսքան ժամանակ փնտաւածնիս՝ վերջապէս... (ցոլցընելով գրարեգին):

**Ոստիկան.** — Երեք չորս օր է, պարոն, զքեզ փնտելով հսկիս քաղուեցաւ... գուռ այս Զնուտին պարտական էք 5750 մանէթ. ժամանակն անցեր է, կամ պէտք

է վճարէր և կամ ինձ հետ դատարանը  
գնաց ու բանդ մտնէր... ուրեմն շուտ, որոշ  
չէ...

**Գարեգին.** — Պատրաստ եմ վճարե-  
լու ռէր է մտերնակս...

**Ջնոշու.** — Շիտակն բեմ՝ տունը մնա-  
ցեր եմ: բայց ֆուս չունի: դու վճարէ փողս  
և ես քեզի ստացազիր կու տամ:

**Գարեգին.** — Չէ, ես իմ մտերնակս  
կ'ուզեմ, ստացազիր չեմ ընդունիր: բեր  
մտերնակս՝ առ փողդ, երբ որ կ'ուզես եկ  
առ...

**Ուտիկան.** — Օ՛, ես ժամանակ ու  
կամք չունիմ, պարոն, երբք չորս օր քաղ-  
ցած շան պէս փողոցէ փողոց ետեւէդ դար-  
ձեալ ման գալու: Ջնոշուի բռածն իրաւացի  
խօսք է: ստացազիր կու տայ՝ որով մու-  
նակ կ'ը ոչընչանայ, վերջը քեզի կը յան-  
ձնէ... իսկ դուն, Ջնոշու, թէ չես ուզեր  
հիմա փողդ առնել՝ որ հուպի թէ պարտ-  
քընտերդ գտեր ենք՝ այն ալ բոս զիտնալու  
բանկ է, երբ որ զինքը գտնես արի՛ առ...  
բայց ես ալ ետեւէդ ինկած զինքը փնտռելու  
կամք չունիմ թէ որ փախչելու ըլլայ: իմա-  
ցար: ուստի հիմայ կ'ուզես փողդ թէ յե-  
տայ...

**Ջնոշու.** — Ի՞նչպէս թէ յետոյ, պա-  
րոն ոստիկանապետ. այդ փողն քիչ փող չէ:  
ամէն օր իրեն առկոսն ունի: արդէն երբք  
օրուան առկոսը կորուսեր եմ, ի՞նչպէս կր-  
նամ հիմայ այս վայրկենիս չպահանջել:

**Գարեգին.** — Ուրեմն գրէ աւել 3000  
մանկթի ստացազիր մը, և ես մկէն...

**Ջնոշու.** — Ի՞նչ 3000 մանկթ, պա-  
րոն Գարեգին, ես ամբողջը կ'ուզեմ 5750  
մանկթ գրտմագլուխը՝ իրեն տասը ամսուան  
շահերով... մէկանց կը պահանջեմ...

**Ուտիկան.** — Վճարէ ուրեմն, ինչու  
կեցեր ես: ժամանակ չունինք... թէ ոչ...

**Գարեգին.** — Վճարեմ, պարոն...  
(Կը հանէ թղթապանակը, կը համրէ 30  
հատ 100 ստրիկնոց թղթադրամ, և յետոյ  
ոսկիներ և արծաթ) Մնացած 1750 մա-  
նկթին ալ նոր պարտամտերնակ տամ՝ շա-  
հերը վրան դարնելով, ու շահուն շահն ալ  
հաշուելով... գո՛հ չե՛ս, Պապա...

**Ջնոշու.** — (Ուսած փողերը գրպանը  
ղնելով և ոսկի Վ՛ալ ոստիկանին տալով)  
Առ այժմ այս փողերն ապահովենք: իսկ  
մնացածին համար պարտամտերնակ տալուդ՝  
կրնամ համաձայնիլ, բայց պայմանաւ մը...  
Նախ այս ստացած փողերու քեզի ստացա-  
զիրս տամ, և ա՛ռաւսիկ (Կը գրէ, բարձ-  
րաձայն ձեւերով առէն մէկ քառեքը): « Ստո-  
բազրեալս Պապա Ղեւի Գաւիթով կը հաս-  
տատեմ իմ յատուկ ձեւացագրով՝ որ այ-  
սօր՝ 1898 թուն, զեկտեմբեր 27ին՝ ըն-  
դունեցայ պարոն Գարեգին Նրանդով Աւե-  
տեանէ՝ իրեն ինծի ունեցած պարտքի հա-  
շուին 3000 մանկթ ոսուսաց տէրութեան  
թղթագրամներ, այսինքն 30 հատ 100 մա-  
նկթնոց թղթագրամ, և 1000 մանկթ ալ  
ոսկի և արծաթ փող, ընդ ամէնն 4000  
մանկթ: Կը ստորագրեմ և կը կրնայեմ...  
Պապա Ղեւի Գաւիթով »... Ա՛հ քեզ ստա-  
ցազիրս... Ուրեմն դուն ալ մնացած 1750  
մանկթին պարտամտերնակ տուր ինծի՝ որ  
զործերնիս լմրնցընենք... ա՛հ թուղթ,  
ա՛հ գրիչ...

**Գարեգին.** — Ա՛խ... (կը գրէ):

**Ջնոշու.** — Պարոն Գարեգին, փողերն  
ինծմէ առած ոտենդ ա՛խ չէիր քաշեր...  
չէիր գիտեր որ առնողը պիտի տայ...

**Գարեգին.** — (Գլուխը շարժելով՝ ի  
նչան բարկոչքեան)... Ա՛հ... դեռ բան  
մընաց...

**Ջնոշու.** — Չէ, գո՛հ եմ, շնորհակալ  
եմ... Հիմա, պարոն ոստիկանապետ, որ  
Գարեգինն այս մտերնակն ինծի տուաւ, պէտք  
է թշուառին ոտքերը կապել որ չփախչի...  
Գարեգին, որովհետեւ ինծի բաւ ծանօթ է  
որ դուն այս վայրկենիս և ոչ մէկ ուրբի  
տէր ես: ունեցածներդ ու տունդ այսպիս  
այնպիս զրաւի ես գրեր ու ամենեւին վարկ  
չունիս, ուստի կրնաս ելլել փախչիլ սլ գիտէ  
մեր, ու իմ փողերս ալ պիտի կորուսին,  
մէջ խաղան... չէ, պարոն, ես իմ գործս  
պիտի կը բռնեմ որ վերջը չզղջամ... Կի-  
տեմ որ դուն փող չունիս, բայց դու որ  
նեղն ինկուս՝ ի հորկէ կը գտնուին բարե-  
կամներ՝ որ քեզի երաշխաւոր ըլլան... ես  
իմ պործս ապահովցընել կ'ուզեմ, թղթի մի

վրայ գրուածը՝ առանց գրաւի՝ այնչափ աւարտուի չէ... Ոստի գուք, պարոն Ոստիկանապետ, ինչպէս որ ձեզի հրամայուած է բարձրագոյն իշխանութեան՝ ձեր պարտքը կատարեցէք՝ Կարեգինը բանտ առաջնորդելու, մինչև որ պատուաւոր երաշխաւոր մը գտնէ ե կամ տեղէ մը մնացած փողն ալ ձարէ, վճարէ, ազատի...

Ոստիկան. — Իրաւացի է... Զինուորք, պարտքերնիդ կատարեցէք. (Զինուորք կը բռնեն գփարեգինը):

Գարեգին. — Ո՛հ, կորուած եմ... անիծած Զ՛ուա...

Զինու. — Գարեգին, զիս մի՛ անիծեք, խաղալի անիծէ՛ որով փողերդ կորսընցուցեր ես... ես քեզի լուսութիւն ըրի փոխ աւելով...

Ոստիկան. — Երթանք... (Հրանդ անքա կը մտնէ՝ միևնչեւ դռար կը բացուի):

ՏԵՍԻԼ ԶՈՐԵՔՏԱՍԱՅՆԵՐՈՐԻ

Աշայինքն եւ Հրանդ (յանձանօթս) Հրանդ. — Ո՛հ, ինչ կը տեսնեմ...

Ոստիկան. — Ոչինչ, պարոն. խաղացող մը պարտքերու տակ ինկած է՝ բանտ կը տարուի. սովորական բան է:

Յարո. — (ժածուկ. — ճիշդ այս սե ազաւար պակաս էր, այն ալ վրայ հասաւ)... Պարոն Գարեգին, այս է այն անձանթ մարդը՝ որուն վրայ քեզի խօսեցայ քեզ առաջ:

Գարեգին. — Ո՛վ էք դուք, պարոն, ես զձեզ չեմ ճանչեր...

Ոստիկան. — Խօսակցելու ժամանակ չէ, երթանք...

Հրանդ. — Ներեցէք, պարոն ոստիկանապետ... եթէ Գարեգինը միայն պարտքերու դիմաց բանա կը տանիք, գուցէ իմ ներկայութիւնս կարենայ այդ պարտքերու վճարումն ընել... ս՛րբան փող է պարտքը...

Զինու. — Տրուանքով հանդերձ 2030 մանէթ տալիք կայ...

Հրանդ. — Շատ լաւ (հանկելով քսակ մը)... պարոն Գարեգին, լաւ ժամու վրայ հասեր եմ՝ բանա մտնելու նախապիշէն

զքեզ ազատելու համար... տհա քեզի 4200 մանէթ՝ որ քեզի կը վերաբերի. ինչորեմ ստացապիւր մը տու՛ր որ այդ փողն հասաւ քեզի...

Գարեգին. — (Աղատուելով զինուորաներէն) Երազ կը տեսնեմ... բարեկամ, դուք ո՛վ էք որ այս մեծ բարբարութիւնն ինծի կ'ընէք... ես զձեզ սեսած չեմ...

Յարո. — (ժածուկ. — Ո՛հ, ազաւ կարծածս աղանի եղաւ, ի՛նչ լաւ մարդ...):

Հրանդ. — Գուն զիս չես տեսած, Գարեգին, բայց ես զքեզ քու տղայութեանդ ժամանակէն տեսեր եմ... ես քու Հրանդ հօրդ ծածօթ մարդ եմ. իրեն հետ վաճառականութիւն ըրած եմ երկար տարե... իրմէն քոյս առանց թողուցած դրամ կար, առանց թղթի ու զրի, որովհետև իրարու վրայ վստահութիւն ունէիրք... բայց ինծի ըսի որ հիմա ինքը Բագուի մէջ մեռած է... ոստի այս փողն արդարութեամբ իմ մօտս պահել շարենալով պէտք է որ իւր որդոյն յանձնէի... ոստի ըրածս բարբարութիւն չէ՛ պարտք է, ե այս փողն ալ իրաւաբէր քեզի կը վերաբերի, ա՛ն...

Գարեգին. — Ո՛վ պաշտելի բարեկամ, առաքինի մարդ... ներեցէք (կը համարարի ի նորախոսքեամբ Հրանդի ձեռքը փողն ընդունելով)... Ա՛ն ուրեմն անգութ, ազահ, անիրաւ Զ՛ուա (կը համարէ քսակէն մնացորդ պարտքը) ա՛ն մնացած փողդ. ես տուր պարտամուրհակս (կ'անէ) ե կորտէ չքացիր առկէս ալ, տնէս այ... (կ'ելլեն Զինու. Ոստիկանապետն եւ Զինուորք):

ՏԵՍԻԼ ԶՆՊԵՏԱՍԱՅՆԵՐՈՐԻ

Հրանդ, Գարեգին, Յարո

Գարեգին. — Հրամեցէք, պարոն, հրամեցէք նստէք, ոտքի վրայ մի՛ մնաք... ներեցէք որ այսպէս շփոթ վայրկեանի մը մէջ... (արտա իրանցընելով):

Հրանդ. — Նեղութիւն մի՛ քաշէք, պարոն Գարեգին... մարդկութիւն է, երբեմն պէպէն այնպէս կը բերէ...

Գարեգին. — Ա՛յո, դիպուածով քոյս

պարտաստ զրամ՝ չկար պէտք եղածին չափ, որովհետև եղածով պարտաւարութեանս մէկ մասը տուեր և ստացազինն ատեր էի, ա՛նա (կը կարդայ) և 3000 մանէթ՝ այսինքն 30 հաս 100 ուռլինոցներ տէրութեան թըղթադրամ և 1000 մանէթ ալ տոկի ու աբ. ծախ. Ընդ ամէնը 4000 մանէթ ու... այսչափ փող մտաս պատրաստ կար տուեր էի...:

Հրակնդ. — (Ծածուկ. — Ո՛հ, ի՛նչ կը լսեմ... ալ ապրակոյս չի միտք, 30 հաս 100 ուռլինոց թղթադրամ...):

Գարեգիկն. — (Անբնդհատ նախընթաց խօսքը շարունակելով) կը մնար միայն 1750 մանէթ՝ որ իզէն բռնած կը պահանջէր այդ անպիտան Զուտը, և իբրև թէ ես փախչող ըլլամ՝ բանդ կ'ուզէր ձգել տալ զիս ու եւրախաւոր առնել... (Գուռը կը գարնուի) Յարո՛, գուռը կը գարնեն, բայց... բայց շատ շնորհակալ եմ որ բախտս զձեզ հասուց և զիս մեծ նախառինքէ մ'ազատեց ձեր ձեռքով... Ո՛հ, բարեկամներս են...:

ՏԵՍԻՆ ԳԵՏՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Հրակնդ, Գարեգիկն, Յարո, Ներսէս, Ալուտ, Տիրան, Հրակնառ

Գարեգիկն. — (Ոտք կ'ենչէ, մի աս մի քնք կը սեղմէ, արքս կը ճրակցընէ) բարի եկաք՝ պարոն Ներսէս, պարոն Ալուտ, պարոն Տիրան, պարոն Հրակնառ... հրամեցէք նստէք...:

Ներսէս. — Ենթերակալ ենք, պարոն Գարեգիկն, նեղութիւն մի կրէք... շատ ուրախ ենք որ զձեզ առողջ կը գտնենք... երեք չորս օր է որ կը հարցընէիք Յարոյի ձեր առողջութեան մասին... կ'ըսէր օր չիւանդ էիք, և ձեր մօտ տեսութեան գալն արգիլեր էր բռնիչը՝ որ ձեր հանգիստը չխանդարուի... հիմա ուրախ ենք որ քաջառողջ էք... Արցեօք ձեր մօտ նստող պարոնը ճանչնալու հաճութիւնը կարող ենք ունենալ:

Գարեգիկն. — Պարոնն ինձ ալ անծանօթ կը քիչ առաջ, բայց թէ՛ խօսքով և

թէ՛ գործով ցոյց տուա՛ որ ողորմած հոգի հօրս՝ Հրանդին բարեկամներէն մին է. և ես շատ ուրախ եմ որ զձեզ իրեն պիտի կարենամ ներկայացընել... (Աս Հրակնդ) բարեկամ, այս ազնիւ պարոններն իմ ամենամտերիմ բարեկամներս են:

Հրակնդ. — Ուրախ եմ զիրենք տեսնելուս, պարոն Գարեգիկն. մարդս այն աւտեն միայն միշտ երջանիկ կը լինի՝ եթէ իրացընէ ազնիւ բարեկամներ ունենայ, որ նեղութեան ժամանակ հեռու չիենան... բայց ըսիք որ ձեր մտերիմներն են... իմ ներկայութիւնս կարելի է տարապէս լինի... զործ ալ շատ ունիմ, խնդրեմ ներէք որ դնամ հասնիմ:

Գարեգիկն. — Ո՛հ, չէ, բարեկամ, ձեր ներկայութիւնը զձեզ երբեք չէ կարող խանդարել կամ մեր մտերմութեան արգելք լինել... դուք ինչպէս ողորմած հոգի հօրս՝ այնպէս ալ ինձ նկատմամբ ձեր ազնիւ բարեկամութիւնը շարունակեցէք. տունս ձերն է, երբ ուզէք հրամեցէք:

Ներսէս. — Բարեկամ, մենք ուրիշ բանի համար եկած չենք, բայց եթէ ուրախանալու մեր սիրելի Գարեգիկի առողջանալուն համար... ո՛հ, որչափ արտում էինք այս քանի մ'օրերս... ինչուան խաղ խաղայն ալ հուստաս, պարոն Գարեգիկն, դուրեցուցեր էինք...:

Ալուտ. — Էլ հիմա ալ անշուշտ զրկմը կ'առնենք, պարոն Գարեգիկնի առողջութեան համար ուրախանալով ու քիչ մ'ալ կոնծելով... Անշուշտ բարեկամն ալ մեզի ընկերել չի հրամարիր:

Գարեգիկն. — Բարեկամ, քարա խաղալ կ'իմանաք, կրնաք մեզի նես...:

Հրակնդ. — Պարոն Գարեգիկն, խաղալ կ'իմանայի առաջ, բայց նախ օրուս մը չըտեսնելով՝ փնտսէ զաս, և երկրորդ՝ անտրական գործոց զբաղելով՝ քսանընից տարի է՝ որ բնաւ չեմ խաղացեր, մոռացեր եմ... հազիւ միայս կու զայ...:

Գարեգիկն. — Ետև կը վարժուիք նսրէն, բարեկամ. պժուար բան չէ, քանի մը խաղ փորձեցէք...:

Հրակնդ. — Խնդրեմ, պարոն Գարեգիկն

զին, ներդուխին ընկը ինձ, ուրիշ անգամ  
կը փորձեմ... հիմա ստիպողական գործ  
ունիմ'... Եօլիով պանդոկը պիտի գնամ'  
ուր բարեկամի մը խօսք եմ տուեր և ան-  
շաշտ հիմա ինձ կը սպասէ... ուստի խրն-  
զրեմ, ներէր... (Ոսք կ'ելլէ):

Գարեգին. — Շատ լաւ, բարեկամ.  
ուրեմն վաղը ձեզի կը սպասեմ այստեղ  
մեր այս ազնիւ բարեկամներու հետ... Յա-  
րօ, ընկերէ պարոնին մինչև իւր բնակարա-  
նը... իսկ մենք, բարեկամք, սկիինք մեր  
խօղը... արդէն սկսելու համար գիտէք մեր  
ուսանական թիւն է տասը մանէթ... զը-  
նենք... :

Խաղաւիյցք. — Դենք... (Կը սկը-  
սի՞ խաղալ):

Տիրան. — Յարօ, հոգիդ սիրես, նախ


պօրիւ մը բեր մեզի... ծարաւ ենք...  
(Յարօ կը զնայ գիւնի բերնոս և կը դասնայ  
շոյտ):

Առտ. — Զարմանք որ Սեպուհը շեկաւ.  
Գարեգին, — Կ'աղարկենք նորա քա-  
մակէն որ գայ... Յարօ, պտնալու ժամա-  
նակդ Սեպուհին իմաց աւար՝ որ իրեն կը  
սպասենք... իմացար... :

Յարօ. — Շատ լաւ, շատ բարի...  
իմացայ:

Հրանդ. — (Դրժուկ. — Ի զճւբ է  
յուսալ... իւր եղբայրը բանտի մէջ... իսկ  
ինքն հագիւ բանտէն ազատուած, և դար-  
ձեալ խաղի՞ նստիլ... մէկ բան միայն կը  
մնայ... այն ալ փորձեմ, և յետոյ...): —  
(Կ'ելլէ, և վարագոյրը կ'իջնայ):

(Շարայարելի)



### ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԻՏԱԼԻԱ



(Տես յէջ 514)

Ծովու վրայ երեկոյեան եւ գիշերուան տեսարանք — Հրապարակք եւ փողոցք. — Սրճարանք:

Դէպ 'ի Հասարակաց պարտէզն ուղղուե-  
ցայ. այսպիսի տեսարանէ մը վերջ՝ կարելի  
է բնական իրեր միայն տեսնել: Սա հողա-  
տափ մ'է քաղաքին ծայրը, [Իրոյի գիմաց:  
Կանաչագեղ թփիկներն ցանկեր կը յօրինեն.  
գեղին և կարմիր ծաղիկներ կը բացուին ար-  
դէն ծաղկոցաց մէջ. օղորկ սօսիներ, խորտ-  
ուբորտ կաղնիք՝ որոց բողբոջազարդ զլուխ-  
ներն կը ցոլանան փայլփլուն ձողուն մէջ: Արեւելեան կողմն կայ դարաժառանգ մը՝ ուսկից կը  
տեսնուին հորիզոնն և հեռաւոր կղզիք: Այն  
տեղ նորա ոտից ստորսար կը տեսնուի ձողն,  
որ կը թաւալի իւր երկայնաձեւ նոսր ալիք-  
ներով կարմրորակ աւազի մը վրայ. փափուկ  
մետաքսեայ և երփնազարդ պոյներ, երակաւոր

վարդեր, վերոնացայ շրջագգեստից նման  
տոգոյն մանիշակներ, Տիախանոսի զառքաշից  
նման թանձր, գինեզոյն ծիրանեփայլ ոսկեայ  
դեղին երանգներ, սեւարակ կապոյտի մէջ  
թաթախուած նսեմազոյն կանաչներ, և ար-  
ծաթեայ խայտախարիւ կամ կայծերով զար-  
դարուած լրժմագոյնք կը ծածանին, կը միա-  
նան և կը խառնուին կրակի անթիւ պար-  
ներու ձեւով որոնք բարձրէն կու պան կ'ընկ-  
նին անոնց վրայ իւրաքանչիւր ծաւալման  
արեւու ճառագայթից: Գողտր կապուտագեղ  
ընկարձակ երկինք մը կը պարզէ իւր գմբէթը,  
որոյ ծայրը կը հանպէի [Իրոյի վրայ, և ե-  
րեք չորս անշարժ ամպեր սաստափէ ժայռերու  
կը նմանին: